ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 77 – Ա

21 փետրվարի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 1-ի N 01-Լ հրամանի հավելվածի 5-րդ կետի պահանջները

որոշում եմ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից սովորողներ ընտրելու և ներկայացնելու համար հանձնաժողով հետևյալ կազմով՝

Կարեն Զազյան -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Համբարձում Սաֆարյան -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Մամիկոն Գալոյան -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների բաժնի պետ
Արամ Խաչատրյան -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ, գլխավոր իրավաբան
Դավիթ Դավթյան-	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել ընտրված սովորողների ցուցակը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

21.02.2020

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ